ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/103

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի կողմից 17.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 17.10.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար օդափոխման սարքերի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վրաբերյալ, և պարզվել է, որ Ընկերությունը 01.10.2018թ. դրությամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 18.000 ՀՀ դրամի չափով:

«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը առաջնորդվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությամբ, որի համաձայն «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /01.10.2018թ./ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Ավելին, 15.10.2018թ. հարկային մարմնի կողմից Ընկերությանը տրված տեղեկանքի համաձայն՝ 01.10.2018թ. դրությամբ ունի գերավճար՝ 265,798 ՀՀ դրամի չափով»:

Վերոգրյալով պայմանավորված բողոքաբերը Բողոքներ քննող անձին խնդրել է.

• Պարտավորեցնել «ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու մասին որոշումը.

• Պարտավորեցնել «ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Աշոտ Զաքարյանը:

2. <u>«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի կողմից 17.10.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 19.10.2018թ. թիվ 1-1273 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար օդափոխման սարքերի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2018թ. սեպտեմբերի 24-ին հայտարարել է «ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Վերը նշված գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի արդյունքների համաձայն՝ նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն և ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման N1 հավելվածի՝ /այսուհետ՝ կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի, պատվիրատուի կողմից հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ /այսուհետ՝ կոմիտե/՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Գործող օրենսդրության և «ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման հրավերի համաձայն «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և գնահատող հանձնաժողովն առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արթուր Ապերյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/103 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի կողմից 17.10.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 02.10.2018թ. նիստի թիվ 2, 08.10.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի 19.10.2018թ. թիվ 1-1273 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար օդափոխման սարքերի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2018թ. հայտարարված «ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 02.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության՝

- 4 կետով արձանագրել է, որ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գանահատվում են բավարար:

- 5-րդ կետով արձանագրել է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 1,290,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

- 6-րդ կետով որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը 08.10.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է հետևյալը. «Ընդունել ի գիտություն, որ հրավերով սահմանված կարգով 02.10.2018թ. հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ: Հարցման վերաբերյալ եզրակացությունը ստացվել է: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.10.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 01.10.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 18,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:»:

Նույն արձանագրության 2.1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության փաստը, իսկ 2.1.2 կետով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետը՝ Ընկերության ներկայացրած հայտը գնահատել է անբավարար:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստում Ընկերության ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ՝ ընդգծելով, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրն առաջնորդվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությամբ, որի համաձայն «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /01.10.2018թ./ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ: Արդյունքում, Ընկերությունը՝ վստահ լինելով, որ չունի ժամկետանց որևէ պարտավորություն՝ հայտ է ներկայացրել Ընթացակարգին, և միայն 04.10.2018թ. պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ տեղեկացել է հայտը ներկայացվելու օրվա դրությամբ առկա պարտավորության մասին: Ընկերությունը նշեց նաև, որ 15.10.2018թ. հարկային մարմնի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ 01.10.2018թ. դրությամբ ունի գերավճար՝ 265,798 ՀՀ դրամի չափով:

Բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց 01.10.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, որի համաձայն Ընկերությունը նշված օրվա դրությամբ որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել, իսկ վերջինիս դեբետային մնացորդը կազմել է 265,798 ՀՀ դրամ՝ ավելացված արժեքի հարկի մասով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման

չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով բաց մրցույթի հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.13 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած

գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.10.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 01.10.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 18,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարըտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- 01.10.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 04.10.2018թ. եզրակացության մեջ արձանագրված՝

դրոշմանիշային վճարի գծով 18,000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունն արտացոլված չի եղել:

- Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը ղեկավարվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությամբ, ըստ որի՝ Ընկերությունը նշված օրվա դրությամբ որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել, և ունեցել է դեբետային մնացորդ՝ 265,798 ՀՀ դրամի չափով՝ ավելացված արժեքի հարկի մասով:

Վերոգրյալով պայմանավորված և հաշվի առնելով, որ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի գնման գործընթացին շրջանակներում արձանագրված ժամկետանց պարտավորության առկայությունը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ նշված պարտավորության վերաբերյալ տեղեկատվությունը Ընկերությունը կարող էր ստանալ բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում առկա տեղեկատվությունից, հետևաբար, Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորության առկայության փաստը չի կարող դիտարկվել որպես Ընկերության՝ հայտը ներակայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 17.10.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

3. Պարտավորեցնել «ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-18/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ